ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ.ԱՊՐԻԼԻ 14-ԻՑ 16-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ռուսաստանի Դաշնություն (Սոչի), 2019թ.ապրիլի 14-ից 16-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Ռուսական «Ռոսատոմ» ատոմային էներգիայի պետական կորպորացիա

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցել «ԱՏՈՄԷՔՍՊՈ 2019» միջազգային համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվեցին՝ ՀՀ-ում ատոմային էներգետիկայի զարգացման հեռանկարները: «Ռոսատոմ»-ի հետ համագործակցության ընթացքը և հեռանկարները: Քննարկվեցին ՌԴ-ի աջակցությամբ իրականացվող «Հայկական» ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում ենթավարկի տրամադրում «Հայկական» ԱԷԿ-ի ՓԲԸ-ին վարկային ծրագրի ընթացքը, միջկառավարական համաձայնագրի (ՄՊՀ) ժամկետի երկարացման հարցեր, առկա խնդիրներ: Նաև՝ «Ռոսատոմ»-ի կողմից վճարվելիք ԱԱՀ-ի հետ կապված հարցեր և 2019թ. պլանավորված կանխարգելիչ սպասարկման (ՊՊՐ) ընթացքի աշխատանքային ծավալները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Հանդիպումներ տեղի ունեցան «Ռոսատոմ» կորպորացիայի գլխավոր տնօրեն Ալեքսեյ Լիխաչովի, գլխավոր տնօրենի առաջին տեղակալ - զարգացման և միջազգային բիզնեսի գծով տնօրեն Կիրիլ Կոմարովի հետ:
   Տեղի ունեցան հանդիպումներ «Skoda» ընկերության ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ընկերության՝ վարկային ծրագրի աշխատանքներին մասնակցության հնարավորությունները:
   Տեղի ունեցան հանդիպումներ ծրագրի իրականացնող գործընկեր ընկերությունների ներկայացուցիչների, ոլորտի այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Միջկառավարական համաձայնագրի մասով ձեռք է բերվել պայմանավորվածություն ՀՀ կառավարության կողմից ՌԴ կառավարությանը ներկայացնել նամակի նախագիծ համաձայնագրի ժամկետի երկարացման առաջարկով՝ կցելով եռակողմ համաձայնեցված վերջնական ծրագիր՝ մնացորդային աշխատանքների պլան-ժամանակացույցը: ԱԱՀ-ի մասով՝ մինչև 2019թ. ապրիլի վերջ հաստատել ռուսական կողմի վճարվելիք ԱԱՀ-ի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշումը, խնդիրները:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շարունակել աշխատանքները ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագիրը սահմանված ժամկետներում իրականացնելու նպատակով:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**

18 ապրիլի 2019թ.